

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ
(Հետաքրքրությունների Հայտերի ներկայացման երկարաձգված ժամկետով)
**(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)**

Ամսաթիվ՝ 05 Ապրիլ, 2024թ.

ԵՐԿԻՐ՝ Հայաստանի Հանրապետություն

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ՝ Քաջարանի թունելի շինարարություն

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ՝ Շուրջ 7 կմ երկարությամբ Քաջարանի թունելի շինարարության և շուրջ 4 կմ երկարությամբ թունելին մոտեցնող ճանապարհների վերակառուցման տեխնիկական հսկողություն

Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ) «Քաջարանի թունելի շինարարություն» ծրագրի ֆինանսավորում ստանալու նպատակով դիմել է Եվրասիական Զարգացման Բանկին, որը հանդես է գալիս որպես Կայունացման և Զարգացման Եվրասիական Հիմնադրամի Ռեսուրսների Կառավարիչ, և մտադիր է օգտագործել այդ միջոցների մի մասը շուրջ 7 կմ երկարությամբ Քաջարանի թունելի շինարարության և շուրջ 4 կմ երկարությամբ թունելին մոտեցնող ճանապարհների վերակառուցման տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների պայմանագրի շրջանակներում:

Խորհրդատվական ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ) ներառում են շուրջ 7 կմ երկարությամբ Քաջարանի թունելի շինարարության և շուրջ 4 կմ երկարությամբ թունելին մոտեցնող ճանապարհների վերակառուցման տեխնիկական հսկողությունը:

Խորհրդատվական ընկերությունը (այսուհետ՝ Խորհրդատու) պետք է իրականացնի պայմանագրով նախատեսված շուրջ 7 կմ երկարությամբ Քաջարանի թունելի շինարարության և շուրջ 4 կմ թունելին մոտեցնող ճանապարհների շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ամբողջ գործընթացը միջազգային չափանիշներին համապատասխան: Շինարարական աշխատանքներն իրականացվում են (FIDIC) Շինարարական Աշխատանքների Պայմանագրի Պայմանների կիրառմամբ ((MDB) համապատասխանեցված հրատարակություն, 2010թ., Վարդագույն գիրք): Խորհրդատուն պայմանագրի շրջանակներում կստանձնի շինարարական աշխատանքների Տեխնիկական հսկիչի՝ Ինժեների բոլոր լիազորություններն ու պարտականությունները: Շինարարական աշխատանքների կատարման պլանավորված տևողությունը (առանց թերությունների վերացման ժամանակահատվածի՝ Defects Notification Period (DNP))՝ 72 (յոթանասուներկու) ամիս է, Թերությունների վերացման ժամանակահատվածի (DNP) տևողությունը՝ 730 (յոթ հարյուր երեսուն) օր է, որը կհաշվարկվի շինարարական աշխատանքների ավարտի օրվանից սկսած, ինչը կհաստատվի հանձնման-ընդունման ավարտական ակտով:

Խորհրդատուն պետք է՝

- Կատարի Տեխնիկական հսկիչի՝ Ինժեների բոլոր լիազորություններն ու պարտականությունները շուրջ 7 կմ երկարությամբ Քաջարանի թունելի շինարարության և շուրջ 4 կմ երկարությամբ թունելին մոտեցնող ճանապարհների վերակառուցման աշխատանքների շրջանակներում՝ (FIDIC) Շինարարական Աշխատանքների Պայմանագրի Պայմանների կիրառմամբ ((MDB) համապատասխանեցված հրատարակություն, 2010թ., Վարդագույն գիրք), ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը համաձայն,
- Վերահսկի պայմանագրով նախատեսված շուրջ 7 կմ երկարությամբ Քաջարանի թունելի շինարարության և շուրջ 4 կմ երկարությամբ թունելին մոտեցնող ճանապարհների վերակառուցման աշխատանքների կատարումը, ծրագրի Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի (ESMP) կատարումը և ապահովի համապատասխանեցումը բնապահպանական, սոցիալական, առողջապահական, անվտանգության և նախագծային լուծումների պահանջներին,
- Վերահսկի իրականացվելիք շինարարական աշխատանքների ծավալների համապատասխանությունը տեխնիկական մասնագրերին և ծավալաթերթերին,
- Կատարի այլ համապատասխան գործառույթներ:

Խորհրդատվական Ծառայությունների Տեխնիկական Առաջադրանքը անգլերեն լեզվով կցվում է սույն Հետաքրքրվածության հայտերի ներկայացման հրավերին:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը, ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին վերոնշյալ Ծառայությունների մատուցման համար հետաքրքրվածություն հայտնելու նպատակով: Հետաքրքրված խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկատվություն, որը կներկայացնի ընկերության համապատասխանությունը ստորև ներկայացվող որակավորման չափանիշներին, ինչպես նաև կներառի նմանատիպ Ծառայություններ մատուցելու անհրաժեշտ փորձը: Խորհրդատուի հետաքրքրվածության հայտը պետք է ներառի հետևյալը՝

- Խորհրդատվական ընկերության հիմնադրման կամ գրանցման վկայականներ,
- Ընկերության գործունեության նկարագիրը,
- Այլ փաստաթղթեր, որոնք ներկայացնում են ընկերության համապատասխանությունը որակավորման չափանիշներին և անհրաժեշտ փորձը Ծառայություններն իրականացնելու համար:

Որակավորման չափանիշներն են՝

ա) Ընդհանուր փորձ՝ մասնակցություն ճանապարհների, թունելների և կամուրջների շինարարական/վերակառուցման ծրագրերին (հաշվի է առնվելու միայն վերջին 10 տարիների ընթացքում մասնակցությունը Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ճանապարհային ծրագրերում),

բ) Նմանատիպ փորձ՝ թունելների և ճանապարհների շինարարության/ վերակառուցման աշխատանքների տեխնիկական վերահսկողության ծառայությունների մատուցման նմանատիպ փորձ (վերջին 10 տարվա ընթացքում նմանատիպ պայմանագրերի քանակը)

գ) Կազմակերպության անձնակազմի և կարողությունների ընդհանուր գնահատում (առկա մշտական աշխատակազմ, առկա ընթացիկ ծրագրերի նկարագիր),

դ) Կազմակերպության, ներառյալ համատեղ ձեռնարկությունների, օրենքով սահմանված կարգով գրանցման ամսաթիվը, հետաքրքրվածության հայտի ներկայացման վերջնաժամկետին նախորդող առնվազն 10 (տասը) տարի առաջ:

Մասնակից կազմակերպությունների հիմնական փորձագետները չեն գնահատվի կարճ ցուցակի կազմման փուլում:

Մասնակից կազմակերպությունները իրենց որակավորումը բարելավելու նպատակով կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ, բայց հայտում անհրաժեշտ է հստակ նշել միավորման ձևը՝ համատեղ գործունեության ձեռնարկության և/կամ ենթախորհրդատուի ձևով: Հաղթող ճանաչվելու դեպքում համատեղ գործունեության ձեռնարկության բոլոր գործընկերները կրում են համատեղ պատասխանատվություն պայմանագրի իրականացման համար:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի որակի և գնի վրա հիմնված ընտրության մրցույթի կանոններին համաձայն (Quality and Cost based Selection method), որը սահմանված է Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրերի գնումների ուղեցույցներով (2018թ. նոյեմբերի խմբագրություն) և Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրերի գնումների ընթացակարգերով (2018թ. նոյեմբերի խմբագրություն), որոնք տեղադրված են Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի վեբ կայքում՝ https://efsd.org/en/about/documents/policies_and_procedures/ հղումով:

Հաղթող խորհրդատուի հետ կկնքվի ժամանակի վրա հիմնված պայմանագիր (time-based contract)՝ շուրջ 7 կմ երկարությամբ Քաջարանի թունելի շինարարության և շուրջ 4 կմ երկարությամբ թունելին մոտեցնող ճանապարհների վերակառուցման տեխնիկական հսկողություն ծառայությունների մատուցման համար:

Խորհրդատվական ընկերությունների կողմից ներկայացված հայտը և բոլոր փաստաթղթերը պետք է լինեն **Անգլերեն լեզվով**:

Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00 (Երևանի ժամանակով):

Հետաքրքրվածության ներկայացման հայտերը պետք է ներկայացնել **Անգլերեն լեզվով** ստորև նշված հասցեով (առձեռն կամ էլ. փոստով) մինչև **06 Հունիսի 2024թ., ժամը 18:00 (Երևանի ժամանակով)**:

Էլեկտրոնային փոստով ուղարկելու դեպքում հայտը պետք է ներկայացնել Adobe PDF ձևաչափով, և վերնագրում անհրաժեշտ է նշել “Expression of Interest (EOI) for Consulting Services: **Technical supervision for Construction of about 7 km Kajaran tunnel and reconstruction of about 4 km approaching roads**”.

Առձեռն ներկայացնելու դեպքում հայտը անհրաժեշտ է ներկայացնել փակ ծրարով և վերնագրում պետք է նշել “Expression of Interest (EOI) for Consulting Services: **Technical supervision for Construction of about 7 km Kajaran tunnel and reconstruction of about 4 km approaching roads**”.

Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ, ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության

Գոռ Ավետիսյան, գործադիր տնօրեն

Հասցեն՝ Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

Հարկ՝ 1 հարկ

Քաղաք՝ Երևան

Փոստային դասիչ՝ 0010

Երկիր՝ Հայաստան

Հեռախոս՝ +374 10 542176

Վեբ կայք՝ armroad.am

Էլ. փոստ՝ procurement@armroad.am, hasmik.ordukhanyan@armroad.am